բապետական աթոռն յաջորդեաց. նոյնպէս և մեք ըստ կարգի և փոխանորդութեան զեկեալ մինչեւ ցառ մեզ զվարդապետական իշխանութիւն՝ տուաք ընձեռեցաք և շնորհեցաք սիրելի և հոգեւոր որդւոյս և աշակերտիս մերոյ Թէոդորոսի Վարդանեանց, յամենեանն օգոստոսի յաւուր ԺԵի, ի Թուականութեան Հայոց ՌՃԻ. շրջել առաքելաբար ուր և յօժարեսցի. և զընկալեալ քանքարն սեղանաւորել. և զսերմն բարելի բանին Աստուծոյ արկանել և սերմանել ի բանաւոր անդաստանին. և զտապ բոցաճենճեր յանցանաց ազգի մարդկան՝ իւրովն շինչուցանել, և զովացուցանել ի ձեռն քարոզութեան յանդիմանութեան և մխիթարութեան։ Ցաղագս որոյ խնդրեմք և պատուիրեմք ընդունել զդա ուր և հանդիպեսցի՝ իբրեւ ի մէնջ առաքեալ. պատուել և մեծարել ըստ ճշմարտաքարոզ ուսուցչաց. զի արժանի է մշակ վարձու իւրոյ։ Խնդրեսցուք բոլորով սրտիւ ի մարդասէր Հոգւոյն՝ որ յաջողէ ի մեզ զկամելն և զառնելն, բանալ քաղցրաքարոզ վարդապետիդ Թէոդորոսի՝ դուռն աւետարանական ասացուածոց, և տալ կարողութիւն ըղձակերտ առնել զարքայութեան բան՝ ի լսելիս հասարակաց, և պարգևել յօժարութիւն յորդորամիտ լինել ունկնդրութեամբ բազմաւ։ Որք ի միասին բոլորապար պարուք խրատողաք հանդերձ համարէն վիճակեալ դաստիարակացելովք՝ ընկալցիք զանճառելի ուրախութիւնն և զանեզրական ցնծութիւնս յարքայութեան երկնից, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ յամենայն ժամ. ամէն։

Գրեցաւ ի կայսերանիստ քաղաքի Կոստանդնուպօլսի ի Թուականութեան Փրկչին ՌՈՀԱ, յամի հայրապետութեանս մերոյ ԺԶի, սեպտեմբերի ի Ա։

ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱՑ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՎ ԳՐԵՑԻ ԱՌ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՍ։